«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Նկատի ունենալով, որ հայցվորը նախապես վճարել է 50.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը, հայցը ենթակա է բավարարման՝ դատարանը գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 362-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Ագաստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ «Աշտարակ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:
2. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշտարակի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Հովհաննիսյանի կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վ.Հովհաննիսյանին հասցեագրված գրության/որոշումը:
3. «Աշտարակ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունից հօգուտ «Ագաստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:
4. Դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:
5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և հրապարակման պահից մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am